ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2025թ. թիվ 136-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի ԹԻՎ 163-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետով և 3-րդ մասով, հաշվի առնելով «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենի 20.02.2025թ. թիվ 11 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի մարտի 24-ի «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի մայիսի 8-ի թիվ 335-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 163-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) «Վիրաբուժական նեղ մասնագիտական բուժ օգնություն և սպասարկում» բաժնում՝

ա. «1. Փոքր վիրակապում» տողում «2500» թիվը փոխարիել «1500» թվով,

բ. «2. Մեծ վիրակապում» տողում «4000» թիվը փոխարինել «2500» թվով,

գ. «6. Եղունգի հեռացում տեղային անզգայացմամբ» տողում «4000» թիվը փոխարինել «5000» թվով,

դ. 7-րդ տողից հետո ավելացնել

7.	Ճարպային գոյացության հեռացում	1 ավարտված դեպք	5000
8.	Մատնաշունչի բացում	1 ավարտված դեպք	2000
9.	Վերքի մշակում և վարում	1 ավարտված դեպք	3000
10.	Թարախակույտի բացում	1 ավարտված դեպք	3000

տողերը:

2) «Ակնաբուժական նեղ մասնագիտական բուժ օգնություն և սպասարկում» բաժնում՝

ա. «1. Տեսողության սրության ստուգում» տողում «2000» թիվը փոխարիել «3000» թվով,

բ. «2. Օտար մարմնի հեռացում» տողում «2000» թիվը փոխարինել «5000» թվով,

դ. 3-րդ տողից հետո ավելացնել

4.	Խալազիոնի մեջ ներարկում	1 ավարտված դեպք	4000

տողը:

3) «Ֆունկցիոնալ հետազոտություններ» բաժնում՝

ա. «1. Էխո ՍԳ» տողում «6000» թիվը փոխարիել «7000» թվով,

բ. «4. Սոնոգրաֆիկ մեկ հետազոտություն (1 դեպք անկախ տեղակայումից)» տողում «4000» թիվը փոխարինել «3000» թվով,

գ. «7. Վահանագեղձի սոնոգրաֆիա» տողում «3000» թիվը փոխարինել «4000» թվով,

դ. «12. Դերմատոսկոպիա» տողում «15000» թիվը փոխարինել «12000» թվով,

ե. 12-րդ տողից հետո ավելացնել

13.	Ռենտգենոգրաֆիա 1 դիրքով	1 հետազոտություն	3000
14.	Ռենտգեն ժապավենի տրամադրում 8x10	1 ժապավեն	1000
15.	Ռենտգեն ժապավենի տրամադրում 14x17	1 ժապավեն	1000
16.	Հոլտեր-մոնիտորինգ	1 հետազոտություն	12000

տողերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. մարտի 17
ք.Վանաձոր